# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՄԻ ԱՌԱՋԱՐԿ

—

Տառերի գիւտի և տպագրութեան համազգային յոբելեանները տօնւեցին աշխարհիս գրեթէ բոլոր հայաբնակ վայրերում։ Մի չտեսնուած տօնակատարութիւն եղաւ սա հայութեան համար. մայր երկրում բնակւող և կամ նրանից անջատուած բոլոր հատուածները գեղեցիկ մի համերաշխութեամբ, խմբւեցին այս տօնի շուրջը և նրան տւին իրօք համազգային բնաւորութիւն։

Համազգային այս տօնակատարութիւնը մի գեղեցիկ յղացման առիթ է հանդիսացել հայութեան գիտակից անդամներից մի քանիսի մտքում։ Եւ այդ այս յոբելեանները ազգային տօնի վերածելու գաղափարն է։ Արդէն թերթերին հեռագրեց Լոզանի ուսանողութեան ու հայ գաղութի միահամուռ ցանկութիւնը այս տարեդարձները ազգային տօնի վերածելու առաջարկը։ Նոյն գաղափարը, կիսիկ հասունացած լինելու պատճառով, միաժամանակ յղացել է հայութեան սրտում – Էրզրումում, ուր ազգային դըպրոցների տեսուչ պ. Ռոստոմն է արել նոյն առաջարկը։ «Հորիզոնը» ևս իր հերթին՝ առաջարկելով ժողովրդական հանգանակութիւն կատարելու ծրագիրը ամեն տարի այս տօնի օրը, գրեթէ նոյն յղացումն է ունեցել—ստեղծելու ազգային մի տօն։

Եթէ իրարից անկախ ու միաժամանակ, և այն տրամագծօրէն հակառակ վայրերից – Տաճկահայաստանից, Թիֆլիսից ու Եւրոպայի մի անկիւնից նոյն առաջարկն է լինում, այդ արդէն լիովին ապացոյց է խնդրի կարևորութեան ու հասունացած լինելուն։ Չենք կարծում թէ որևէ մէկը սկզբունքով ժխտէր այդպիսի մի տօնի անհրաժեշտութիւնն ու օգտակարութիւնը աշխարհացիր հայութեան համար։

Իրենց գոյութեան ու պատմական առաքելութեան գիտակից ազգերը բոլորն էլ ունին իրենց ազգային տօնը մի օր՝ ուր ազգութեան բոլոր անդամները ընդհանուր հրճւանքի ու ցնծութեան մէջ անդրադառնում են դէպի իրենց անցեալը ընդգրկող մի հայեացք նետում իրենց ազգային գոյութեան կարևոր մոմենտների վրայ և այդու աւելի ևս որոշ, աւելի ևս ցայտուն դարձնում այն ուղին, որով իրենք պիտի ընթանան ապագայում։ Եւ իբրև ազգային իրաւունքի ու նրա գոյութեան մի օր, բոլոր ազգերը իրենց ազգային տօնը կապել են իրենց անցեալի ամեն ախոշոր յեղաշրջիչ դէպքի հետ։ Ֆրանսիացու համար չկայ աւելի մի յիշատակելի օր քան յուլիս 14-ը, — Բաստիլի անկման անձկալի օրը։ Շվէյցարացին իր ազատութեան համար կռած երդումի օրը — Գրուտլիի խորհրդաւոր ժողովն է տօնի առարկայ դարձնում։ Հեռաւոր Սկանդինաւացին ազգային դիւցազն Ֆրիտեօֆի անուան շուրջն է հիւսել իր ազգային վերածնութեան ամենագեղեցիկ յուշերը... Եւ այդպէս բոլոր ազգերը։ Նոյն իսկ ամբողջ աշխարհում տարագիր ու ցիրուցան, ազգային տերրիտորիայից անգամ զուրկ հրէաները ահա մի քանի տարի է ինչ որոշել ու տօնում են իրենց ազգային տօնը ամենայն ակնածութեամբ ու համերաշխութեամբ։

Այս բոլոր ազգերն էլ գրեթէ իրենց ազգային տօնը կապել են իրենց քաղաքական ազատագրական ու վերածնութեան անմոռանալի օրւայ յիշողութեան հետ։ Դժբախտաբար մենք չունենք այդպիսի մի օր։ Տարաբախտ մի զուգադիպութեամբ, մեր մտաւոր վերածնունդի դարաշրջանը զուգորդւել է մեր ազգային անկախութեան անհետացման ժամանակաշրջանի հետ։ Սակայն այդ աւելի ևս խորհրդաւոր պիտի դարձնի մեզ համար այդ օրը։ Եթէ մենք զրկւելով հանդերձ քաղաքական ազատութիւնից չենք կուլ գնացել դարերի ամենակուլ յորձանքներին, այդ եղել է միայն շնորհիւ մեր ամենագլխաւոր ազգային յենարանի – մեր լեզուի ու գրականութեան։

Հայ գրքի ու տպագրութեան սկզբնաւորութեան տարեդարձի օրը վերածելով ազգային տօնի և կատարելով այն հանդիսաւորապէս ամեն տարի, մենք մեր ազգային ինքնագիտակցութեան մի ուժեղ ապացոյց տւած կը լինենք։ Ազգային այդ տօնը առիթ կը լինի, որ տարւայ մէջ մի օր մենք բոլորս սրտաբուղխ կերպով կը տանք մեր կամաւոր նուէրները մեր ազգային գոյութիւնը ամրապնդող հանրօգուտ ձեռնարկների համար. այդ կը լինի մի օր, երբ ամեն մի հայ առանց բացառութեան իր ուրախութեան ու տօնական հանդէսների մէջ կը ցուցադրի իր ամենաթանկագին զգացումը —ազգային զգացումը և կանի որ և է զոհաբերութիւն ըստ այդ զգացմունքի խորութեան։

Յարմարութեան տեսակէտից ևս այս տարեդարձների օրը գերադասելի է հայ ազգային տօնի վերածելու համար։ Գրի ու տպագրութեան սկզբնաւորութեան յաւերժացման շուրջը որ և է տարաձայնութիւն տեղի ունենալ չի կարող։ Այնպիսի գեղեցիկ ու վսեմ գաղափարներ են դրանք, որ դրանց շուրջը կը համախմբւեն հայախօս, ռուսախօս, քրդախօս ու տաճկախօս հայը, հայ լուսաւորչականը, հայ կաթոլիկն ու հայ բողոքականը, հայ հարուստն ու աղքատը, հայ ընկերվարականն ու պահպանողականը, առանց խտրութեան։

Մամուլի նիւթ դարձնելով այս առաջարկը, մենք սպասում ենք, որ տարբեր կարծիքների ու պարզաբանութեան նիւթ դառնալուց յետոյ, պատշաճ մարմինների ու հաստատութեանց զբաղման առարկայ կը հանդիսանայ այն։

Ա. Յովհաննիսեան

Լոզան, 15 նոյեմբ.